

# ԳՐԱԽՕՍՈՒԹԻԻՆ

Սիօն վարդապետ Տէր-Մանուկեան

«ԵԶԻԴԻ ԿՈՒՐՄԱՆԺ»

Ալաշկա, տպարան եղբ. Մարտիրոսեաններէ, 1910.

42 էր. գինը՝ 40 կոպ. :

«Բիր փառք Խորենացուն. որ այսօր զարթեցնում է մեր թմրութիւնը մերային անմեռ անցեալի յիշատակներով . . . .»

ՀԵՂԻՆԱԿ

Վատ նիւթ չի ընտրել իր համար Սիօն վարդապետը, հրապարակ հանելով՝ մեզ դրացի և ժամանակակից մի ժողովրդի ընտիր ու օրինակելի յատկութիւնները: Այդ ժողովուրդն է եզիդին (Նեղինակի արտասանութեամբ՝ եզիդին), որին մեր պատմութիւնն անուանել է մեզացի, իսկ մենք՝ քուրդ:

Յայտնի է, որ երբ պատերազմ սկսուեց մարերի ու ասորիների միջև, մեր առաջին թագաւոր Պարսյրը—իբրև զաշնակից մարերի—օգնութեան հասաւ Վարդակէսին և ապահովեց ըրեց նրա յաղթանակը Սարգանաբազի դէմ: Այսպէս, ուրեմն, մարերը կամ եզիդիները դրացի ու բարեկամ են մեզ թէ՛ պատմական դէպքում և թէ՛ ներկայումս:

Նզիզին ըտրք սրտով ու հոգով դաւանում և հաւատում է մի ստեղծող Աստուծուն երկնքում, նրա զօրութեանը, փառքին և իմաստուն ու անսահման նախախնամութեանը: Նրա հիմնական յատկութիւններն են՝ անվեհեր քաջութիւն և ճշմարիտ ազնուութիւն: Նա յարգում է թէ՛ բարի ու թէ՛ չար հրեշտակին, որին մարդկութիւնն անուանել է դև, սատանա:

Միայն եզիդին է, որ պաշտելու չափ յարգում է՝ Աստուծուց պատժուած անբախտ հրեշտակներին. բայց, որ գլխաւորն է, ո՛չ թէ երկիւղի կամ սարսափի ազդեցութեան տակ, այլ՝ մարդասէր կարեկցութեան և սրտացաւ գթութեան:

Եզիդին ընդունում է հոգու անմահութեան դադափարը, բայց ո՛չ մահմետականի երեւիացութեամբ: Իր հանգուցեալի մեղքերի բաւութեան համար՝ մատաղ է բաժանում:

Յուզարհաւորութիւնը կառարուժ է շէխը կամ փերը՝ իր ազօթքով ու մեղամաղձոտ երգերով: Նեխը կարելի է համեմատել եպիսկոպոսի հետ, իսկ փերը՝ քահանայի: Փեր նշանակում է սուրբ, առաքինի: Ննջեցեալին թաղում է խոր գերեզմանի մէջ՝ նստեցրած, — երեսը՝ հարաւ արևելք:

Օջախն, ինչպէս և միջի կրակը՝ ասճարի չափ սուրբ է նրա աչքում և, պաշտելու չափ յարգում է, նոյն իսկ երկըրպագում արշալոյսին: Իրան անուանում է կուրման ժ, որ ուղղափառի իմաստն ունի: Մասնական արարողութիւններ է կատարում և՛ թոնրի շրթի շուրջը:

Եզիզին հիւրասէր է, լուանում է հիւրի ստները. մի կին է առնու: Կնոջ անբարոյականութիւնն անհասկանալի է նրա համար. ամուսնալուծութիւնը կատարում է ... հրացանի գընդակը:

Եզիզուհին գործում է խալիչա, կապերա, փառաւոր վըրան. նրա նուբը կապերաները հասնում են նոյն իսկ արասասհման: Եզիզին պատրաստում է թանգագին քեչաներ: Եզիզուհին անասելի աշխատասէր է. գոված է նրա պատրաստած պանիրը, որի լաւը կարելի է բարձր համարել հուլանդականից:

Եզիզին՝ իրան շրջապատող ցեղերին նայում է ոլլմպիական բարձրութիւնից, նրանց անուանելով «Ֆլայի» — բանոր, սարուկ: Կուրմանժը հպարտ է, սրամիտ. աջող ու արագ հաշուում է տաննեակ հազարաւոր թուեր, աւելի աջող՝ քան թւաբանը:

Մեզ, հայերիս նա համարում է իր կանեկից բարեկամը. սիրով յաճախում է հայ եկեղեցին և ուխտատեղերը՝ մոմ վառելով ու մատաղ մորթելով. Ս. Սարգսի պատին մեզ հետ երեք օր ծոմ և պաս է պահում: Միայն սաստիկ խորշում է երեսը խաչ հանելուց: Նատ աննշան բացառութեամբ՝ եզիզին խօսում է հայերէն, բաւական ազատ:

Նա շատ հմուտ է վիրաբուժութեան, մանաւանդ անդամահատութեան մէջ: Աջողութեամբ ու արագ բժշկում է ուկորային ջարդուածքներ ու խախտումներ: — Մենամարտի ու կռուի մէջ եզիզին դժուար թէ իր հաւասարն ունենայ աշխարհում:

Ռուսաբնակ եզիզիները ներկայ ցեղապետն է համարում Ուսուպ — Բէկ Թեմուրեանցը, որ իր տարրական կրթութիւնն ստացել է Գէորգեան ձեմարանում՝ իր լուսամիտ հօր՝ Հասան աղայի ջանքերով: Եզիզիները հանուր կրօնապետը բնակում է Մոսուլի ու Բաղդասի մօտերը: 1909 յունվարի 30-ին գալով

Վավկաս, մի քանի օր մնաց ս. Եջմիածնում և այցելեց սրբա-  
վայրերը:

Մասոյց դէպ արեւմուտք, Բարդոզ լեռների հովտում, Վով-  
կասեան փոխարբայի բարձրագոյն հաճութեամբ, արդէն բաց-  
վելու է եղիդինների համար տարրական անդրանիկ դպրոց:—

Առաջ բերելով գրքոյկի այս համառօտ բովանդակութիւնն,  
իմ ցանկութիւնն է՝ գաղափար ապլ նրանց, ոյքեր անբախտու-  
թիւն հունենան չհարդալու այս գրքոյկը, որ, ի դէպ, գնահատ-  
ված է շատ թանգ՝ 40 կոպէկ, հետեւապէս՝ երեսը 1 կոպէկ:

Պէտք է աւելացնեմ, սակայն, որ հ. հեղինակը, մօտիկից  
ճանաչելով եղիդուն և, իրաւունքով գնահատելով նրա պէս-պէս  
առաքինութիւնները, ուղղակի բերանի ջրերը գնալու շափ՝ հա-  
մակրութիւն է արտայայտում դէպ այդ տղամարդ ցեղը: Եւ՝  
իրաւունքով:

Պէտք է նկատեմ, որ կարիք չկար առանձին գլուխներ  
յատկացնելու «Բացատրութիւն վիշապազուն մար ցեղանունն»  
և «Բացատրութիւն մարաց «Նախճաւան—Նախճուն» քաղաքի  
(եր. 38 և 39—40), քանի որ դրանց տեղը ծանօթութիւն-  
ներն են:

2. հեղինակը լեզուի հարցն էլ է շօշափում, բայց՝ ան-  
տեղի: Նա ասում է, «Լեզուիս և ուղղագրութեանս՝ մերա-  
յին գրականութեան սոկեղինիկ բարբառին փոքր ինչ մօտ լի-  
նելու համար՝ թող ներուի ինձ կրկնելու՝ յայտնի լեզուաբան  
և բանիբուն հայկաբան՝ աշխարհահռչակ Արհիեպիսկոպոս Այ-  
վազովսիու գիտական պատգամն»—«Մեր աշխարհիկ աղքատիկ  
բարբառն՝ լեզու դարձնելու համար՝ իւր մայր, ճոխ դրաբարին  
մօտեցնելու է»: Բայց որովհետեւ հայի ապիրատ դէվիզն է՝ կու-  
րօրէն կուիւ մղելն իւր նուիրական սրբութիւնների դէմ, ուստի  
նա այսօր էլ իւր վանդալական գուլ դանակն առած, ասպա-  
րէզ է իջել՝ քերթող հանդիսանալու . . վեհապանձ պերճ լեզուի  
և նորա . . անաղարտ ուղղագրութեան . . . (եր. 42)»:

Թող ների ինձ այդ տողերի հ. հեղինակը, եթէ ասեմ, որ  
Այվազովսիին, իր բոլոր լեզուաբանութեամբ, հայկաբանու-  
թեամբ ու գիտնականութեամբ՝ մէջ միայն ցանկանում էր աշ-  
խարհիկ բարբառը մօտեցնել դրաբարին, այլ և՛ մեռած գրա-  
բարը կենդանացնել . . .

«Սակայն անդրդուելի կմնայ միշտ սա ճշմարտութիւնը՝  
թէ լեզուի մը հին գրականութեան մէջ պահած անմահութիւ-  
նը մեռելապատկեր մահատիպ անմահութիւն մըն է, որ միշտ  
գուրկ է կեանքէ, վասն զի չիօտուիր . . » (Հ. Ս. Վ. Տէրվիշեան):

Մեր աշխարհիկ լեզուն գրաբարից չի՛ առաջ եկել, որ պէտք ունենայ նորից գրաբարին մօտենալու: Այդ լեզուն, այն, կարող է օգտուել գրաբարից, բայց ոչ՝ մօտենալ նրան: Նա կարող է ու պէտք է օգտուի մեր... դաւառաբարբառներից:

«•• Խնդիրը զուտ գործնական է, այսինքն չենք փնտաւր թէ՛ ս'ը լեզուն կը սիրենք բանեցնել, այլ թէ՛ ս'ըը կը հարկադրենք գործադրել, որո՞վ կրնանք ասլրիլ» (Հ. Ա. Վ. Այտընեան):

Ես աւելին կասեմ:

Դեռ ևս 1876 թուին, Այվազովսկու հրաւերով և նախագահութեամբ, Թիֆլիսում կազմուած Բանասիրական ժողովներում, որտեղ տեղական հրապարակախօսների, բանասէրների և առհասարակ ինտելլիգէնտների թւում, հրաւիրուած էր և՛ այս տողերը գրողը, գիտնական առաջնորդը շատ ցանկացաւ յարութիւն տալ գրաբարին: Սակայն, բանից երեւցաւ, որ իր հիւրերն արդէն վաղուց էին որոշել, որ գրաբարը մեռած է, և նրան յարութիւն տալն՝ անօգուտ աշխատանք:

Դառնալով հ. հեղինակին, որ այդպէս խիստ լեզուով ու բարձրից է խօսում լեզուի մասին, ես կը աւականանամ, միայն նրա գրածներից նմուշներ բերելով:—

Նա գրում է՝ «Թիւրիմացն պատահականութիւն, իւրն իսկութեամբ, մարդասիրականն կարեկցութեան, կարեկիցն դժութեան, մարդկայինս ազգութիւններից» ••

Յետոյ: Մի նոր պարբերութիւն սկսում է՝ *այսպէս*. «Ը. ս. տ. որ ում դառնանք •• ընդհանուր նկարագրութեան» (Եր. 5):

Վերջաբանի առաջին մասը, որ 12 տող է բռնում, և որ ես առաջ չեմ բերում, — անհասկանալի է: Ահագին պարբերութիւնն սկսւում է «Որովհետև» բառով և, սակայն, չի՛ երևում՝ քերականօրէն գրան հետևող բառը:

Իսկ երկրորդ մասը, որ բռնում է, ո՛չ աւել, ոչ պակաս՝ 20 տող, — շունչ առնելու հնարաւորութիւն չի՛ տալիս կարդացողին:

Լեզուական այս անկանոնութիւնները նկատի ունենալով հանդերձ, այն աստիճան պիտանի ու շահեկան եմ համարում ես հ. Սիօնի այս փոքրիկ աշխատութիւնը, որ չեմ կարող չը յանձնարարել մեր բանասէրներին՝ մասնապէս և ժողովրդին՝ հանրապէս:

Է. ք. Ն.